Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի հմբ. 24, որով կարգին ի պաշտօն վանական կառավարութեան Մայր Աթոռոյ, Գեր. Տ. Սարգիս եպիս. նախանդամ և բարեշնորհ Ղեւոնդ վրդ. Յովակիմեան և Թադէոս աբեղայն Ռափիսեան Անդամք։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան հմբ. 31 յանուն Տիկին Մարիամու Բէգթաբէգեան և Օր. Աննայի Զիրախեան սակը նուիրելոյ մի հազար բուբլիս յօգուտ սովելոց։

Կոնդակ յանուն Գեր. Առաքնորդին Տրփխեաց Ս. Գէորգ եպիսի. հմբ. 57, որով շնորհի նմա զԱրքեպիսկոպոսութեան պատիւ։

Կոնդակ յանուն նոյն Առաքնորդի, հմբ. 58. որով թոյլատրի նմա բանալ Օրիորդական Հոգևոր դպրոց ի Զաքաթալա քաղաքի։

Կոնդակ յանուն ճարտարապետ Նիկողայոսի Գրիգորեան, հմբ. 59. որով կարգի խնամակալ Նորաշէն դպրոցին Կուկիոյ Տրփխեաց, և արտօնի կոչել զայն «Գրիգորեան»։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան, հմբ. 77. յանուն Խորէն վարդապետի Փորթուգալեան և ազգայնոցն Կիպրոսի, սակը նուիրի ութ անգղիական ոսկւոյ յօգուտ սովելոց։

Կոնդակ յանուն Յովհաննէս աւագ քահանայի Տ. Գալստեան և Տիկին Ոսկեհատի Տ. Յովհաննէսեան (Մուրացան) հմբ. 78. որով կարգին խնամակալ օրիորդական դպրոցին Ախալքալակ գեղջ Գօրւոյ։

Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի հմբ. 102, վասն կտակի հանգուցեալ բժիշկ Տիգրանեանի Նոր Նախիջևանցւոյ։

Կոնդակ յանուն Յովհաննէս վարդապետի. Շիրակունւոյ, հմբ. 105 որով փոխադրի նա պաշտօնիւ փոխանորդութեան ի Տաթևէ ի Գանձակ։

Կոնդակ յանուն Գրիգորիս վրդ. Տէր Յակոբեան հմբ. 106, որով կարգի փոխանորդ հօտին Սիւնեաց ի տեղի Յովհաննէս վարդապետի Շիրակունւոյ։

Կոնդակ յանուն թեմ. Ատենին Վրաստանի և Իմերէթի, հմբ. 107 որով յայտնի փոխադրութիւն Գարեգին վարդապետի և հաստատութիւն Յովհաննէս վարդապետի Շիրակունւոյ ի Գանձակ։

Կոնդակ յանուն Եղիշէ Մատաթեանի, հմբ. 110 որով կարգի տեսուչ թեմ. դպր. Նուշւոյ։

Կոնդակ յանուն Արիստակէս Եպիս. Դաւթեան հմբ. 115, որով կարգի Նախագահ Տպարանական Ժողովոյ Մ. Աթոռոյ և յանդամութիւն Ժողովոյն բարեշն. Կոմիտաս և Եղնիկ Աբեղայք։

ՈՈՒՍԱՀԱՅՔ.

Ա. Երևանի թեմ.

ԿԻՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐԱՊԵԱՆ.

Մարտի 8-ին յետ կարճատև հիւանդութեան Նոր Նախիջևանում վախճանուեց Երևանի Փոխ-թեմական Սրբազան Կիւրեղ եպիսկոպոս Սրապեան, որ վեհափառ Հայրապետի ուղեկիցներից մին էր. այս անակնկալ լուրը խորին վիշտ պատճառեց ամէն դասակարգի ազգայնոց, որպէս և Մայր Աթոռոյս միաբանութեան։

Կիւրեղ Սրբազան ծնուած էր 1844 թուին Տաճկաստանի Կեյվէ գիւղաքաղաքում, որ պատկանում է ի կրօնականին Նիկոմիդիոյ Առաքնորդութեան. աշխարհական անունն Ալէքսան էր. նախնական կրթութիւն

ստացել էր տեղւոյն ազգային դպրոցին մէջ և ապա Ս. Երուսաղէմի վանքը գնալով այնտեղ շարունակած է իւր ուսումը ժառանգաւորաց դպրանոցում։ Ի վերջոյ վարդապետ ձեռնադրուած է 1868 թուին ի Տէր Հանգուցեալ Եսայի Պատրիարքից։ Ս. Երուսաղէմում մինչև 1872 թուականը թէ ուսուցչական և թէ վանական ինչ ինչ պաշտօններ վարելէ վերջ, ներկայ Վեհափառ Կաթուղիկոսի պատրիարքութեան ժամանակ գնացել է ի Պոլիս և պատրիարքարանի կողմից Սեբաստիա ուղարկուած է իբրև քննիչ տեղւոյն Առաջնորդին և ժողովրդի մէջ ծագած խնդիրների, խղճի մտօք իւր պաշտօնն աւարտած և տեղեկագիրն յղած ի պատրիարքարան։ 1875 թ. վերջերում եկած է ի Մայր Աթոռս և ի միաբանակցութիւն ընդունուած է երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսից, որ և ճեմարանի մաթեմատիկի դասերը յանձնել է նմա։ Հանգուցեալն աշակերտած լինելու բաղդ ունեցողների ամէնքն էլ կը վկայեն՝ թէ որպիսի հմտութիւն ունէր իւր առարկային մէջ, զոր կուսուցանէր ամենայն անձնուիրութեամբ, խորին յարգանք վայելելով միևնոյն ժամանակ աշակերտներից։

1877 թուականին ապրիլ ամսում վարձատրուած է Գէորգ Դ. Կաթուղիկոսից վարդապետական ականակուռ լանջախաչով, որպէս և քիչ վերջ ծաղկեայ մանիշակագոյն փիլոնով։ 1879 թուականին հրամանաւ Նոյն Հայրապետի ուղարկուած է Կարս, նոր նուաճուած նահանգներում գտնուած Հայոց եկեղեցեաց, վանօրէից և ժողովրդեան մասին տեղեկագիր կազմելու. իւր այդ ուղևորութեան առթիւ հանգուցեալ Եպիսկոպոսը «Ճանապարհորդական նկատողութիւններ» գրած է, որք հրատարակուած են Արարատ»ում։ 1880–1881 թուականներին Հայոց լեզուի դասերն աւանդած է ճեմարանում։ Ի դէպ է այստեղ յիշել որ Հանգուցեալը խորին հմտութիւն ունէր գրաբար լեզուի, այնպէս որ Գէորգ Դ. հոգեւոյս Կաթուղիկոսն «Խորհրդատետրի տպագրութեան ժամանակ (1880 թուին) լեզուի սրբագրութիւնը, որպէս և զանազան օրինակների բաղդատութիւնը նորան յանձնեց։

1884 թուին նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքն ուղարկուած է իբրև վանահայր, քիչ վերջն իբրև միաբան և ապա 1885 թուին անպաշտօն կերպիւ նոր Նախիջևանում մնացել է քարոզութիւններ անելով, ի մեծ միխիթարութիւն քաղաքացւոց, որք ի նշան յարգանաց և սիրոյ արծաթեայ մի փառաւոր գաւազան նուիրած են նորան. յաջորդող տարիներում ռուսաց հպատակութիւն ևս ընդունելով, ըստ խնդրոյ «Մարդասիրական ընկերութեան» բագուի ուղարկուած է ի Շամախի քարոզչութեան պաշտօնով հրամանաւ հանգուցեալ Մակար Հայրապետի։

1891 թուին իբրև պատգամաւոր Բագուի Հայերի կողմից ներկայացնուած է Մակար Կաթուղիկոսի յուղարկաւորութեան և այս առթիւ սեղանատանը ուշադրութեան արժանի մի բանախօսութիւն ևս արած է, (տեսնել «Արարատ» 1891 թ. մայիսի տետրակն)։ 1882 թուականի աշնան Երևանայ վիճակի փոխանորդ կարգուած է և այդ պաշտօնը վարել է ամենայն աչալրջութեամբ։

Ներկայ Վեհափառ Հայրապետի հրամանաւ զանազան կողմեր քննիչ ուղարկուած է ինչ ինչ գործոց առթիւ, որպէս անցեալ յուլիս ամսում ի Շուշի թեմ. դպրանոցի ծանօթ խնդրոյ առթիւ, որոյ մասին հոգեւոյս Սրբազանի մատուցած տեղեկագրին որքան ճիշդ լինելն յաջորդող դէպքերն կը վկայեն։ Վեհափառ Հայրապետի անդրանիկ եպիսկոպոսական ձեռնադրութեան անցեալ 1894 թուին բաղդ ունեցաւ անդրանիկ որդի լինելու Նորին Ս. Օծութեան և առաջաւ եպիսկոպոսական պանակէ։

Հանգուցեալը տպագրուած և ձեռագիր գրաւոր վաստակներ ունի բարոյագիտական, կրօնական, պատմական և լեզուաբանական բովանդակութեամբ։

Երևանի թեմում, որպէս և այլ վիճակներում կատարուած հոգեհանգիստնե-

բրն ժողովրդեան բուռն համակրութեան արտայայտութիւններն են դէպի հոգելոյս Սրբազանն, որոյ մահուամբ Հայաստանեայց Եկեղեցին կորցրեց իւր արժանաւոր եպիսկոպոսներից մին, Հայ Ազգը իւր արդիւնաւոր զաւակներից մին և Երևանի թեմն ի մասնաւորի, իւր օրինակելի և ժողովրդական Առաջնորդին:

Օրհնեա՛լ լինի յիշատակն առաքինի Կիւրեղ եպիսկոպոսի. ա՛մ Երկինք որ նմանները շատ լինին ի միսիթարութիւն բազմակարօտ Հայ ժողովրդեան:

ՍԵՒԱՆԱՑ ՎԱՆՔ.

Սևանի հռչակաւոր վանքը, որ այսօր ճգնութեան և ապաշխարանաց վայր է, հետևեալ միաբանական կազմութիւնն և տնտեսական վիճակն ունի.

Սեւանայ միաբաններն են.

Վեց (6) վարդապետ. մէկը զառամեալ և անդամալոյծ, երկու (2) սարկաւագ, եօթը (7) ժամասացներ, աստիճան չունին. Լեն (9) ապաշխարող անունով աշխարհական մարդիկ. Ուրեմն ընդամենը 24 հոգի են միաբանները. 8-ը հոգևորական, 16-ը աշխարհական: Կան և 6 մշակներ, ուրեմն Սևանում ապրումեն 30 անձինք.

Մուտք (իւրաքանչիւր տարի).

Կալուածքներից. Գոմաձոր (67 տուն) և Ցամաքարերդ (52 տուն) գիւղերից տասանորդ հացահատիկներ 20 խալուար 20 բուրլիով 400 ր. 60 խաբար դարման՝ 1 բուրլիով 60 ր. 30 սայլ ցախ՝ 2 բուրլիով՝ 60 ր. Զանգուի խանութից՝ 40 ր. Ելենովկայի խանութից՝ 300 ր. Ելենովկայի ջրաղացից՝ 150 ր. Զոլոի ջրաղացից՝ 30 ր. Շարիրի ջրաղացից՝ 30 ր. Ն.-Բայազիդի վեցքարանի ջրաղացից՝ 400 ր. Ելենովկայի մօտի Սերակլու խոտից և ձուկից՝ 400 ր. Երևանի մի այգուց, մի ձեռք տների և երկու խանութից 250 ր. Թիֆլիսի խանութներից հետի տներով՝ 800 ր. Մամաձախսոյ՝ 400 ր. Ս. Նշանի խաչահամբոյր վանքում՝ 400 ր. Առաքելոց վանքի խաչահամբոյր՝ 75 ր. Ս. Նշանի խաչահամբոյր գիւղերում՝ 150 ր. Մատաղ՝ գառներ և հացահատիկ՝ 600 ր. Նուիրակութեամբ ժողոված իւղ՝ 15 պուդ 120 ր. պանիր 20 ր. Լոբի, ոսպ, սիսեռ՝ 30 ր. Զէթ՝ 60 ր. Մոմ՝ 60 ր. Տաւար ծախելուց՝ 100 ր. Գումարը 4935 ր.

Ծախքեր իւրաքանչիւր տարի) Սեւանի վանքում:

30 խալուար հաց՝ 600 ր. 4 խալուար բրինձ՝ 210 ր. իւղ՝ 200 ր. ձէթ՝ 50 ր. պանիր՝ 50 ր. աղ՝ 50 ր. ձուկ՝ 50 ր. սոխ, կարտոֆիլ, լոբի, սիսեռ, ոսպ՝ 100 ր. բոխ՝ 20 ր. միս՝ 50 ր. միրգ՝ 50 ր. Շորեղէն՝ 500 ր. մշակների՝ 400 ր. ժամոց միաբաններին՝ 400 ր. մոմ եկեղեցու 100 ր. վառելափայտ և ածուխ 150 ր. նաւթ 100 ր. սապոն 50 ր. արքունի հարկ 100 ր. հիւրերի 100 ր. կարկատան 100 ր. նորոգութիւն, մանրը ծախք, անակնուելիք՝ 300 ր.—գումարն է 3730 ր.

Մուտքից ծախքը հանած՝ մնացորդն է 1205 ր.

Այդ 1200 ր. մնացորդ աւելցուկը նախորդ վանահայր Կարապետ վարդապետը (որ վարել է իւր պաշտօնը 30 տարի), ծախսումէր շինութիւնների, կալուածքներ շինելու կամ գնելու և սակաւ բացառութեամբ տալիս էր տոկոսով. Այդպիսով նա կղզում շինել է. թէպէտ անյարմար, շատ խցեր, սենեակներ, Ելենովկայում երկու քարվանսարայ, ջրաղացներ Նոր-Բայազիդում, ջրաղաց Ելենովկայում, գնել է այգի, խանութ, տուն Երևանում. Տոկոսով տուած է Նոր-Բայազիդում 900 ր. Երևանում 900 ր. զանազան տեղեր 500 ր. Վերջին 5 տարին շինութիւնք եղած չեն, այժմ վանքը պատրաստի ունի հինգ հազար (5000 ր.) կանխիկ դրամ, որը բանկ չէ տալիս, անտոկոս պարկած է և մուրհակներ 3000 (երեք հազար) բուբլու.

Բ. ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Մարտի 4-ի շաբաթ օրն Պուլկարաց Գեր. Էկզարքոսն կրօնական և աշխարհական հետևորդներով այցելութիւն տուած է Ամեն. Մատթէոս Պատրիարքին, որ սիրալիր ընդունելութիւն արած է Պուլկար եկեղեցւոյ Պետին.

Հայ—Հռովմէական Ցուրիկեան Յովհաննէս վարդապետ խնդրագիր տալով Իզմիրլեան Ս. Պատրիարքին, փափաք յայտնած է ի ծոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վերադառնալ. Կրօնական ժողովն նորան յԱտեան հրաւիրել է և հրապարակաւ լսել է բերանացի խոստովանութիւն թէ յանուն ճշմարտութեան դիմում է իւր մայրենի Եկեղեցին. յետ որոյ Մայր Եկեղեցի տարուելով երկու աւագ քահանայից հետ՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնը կարդացել և օրհնութիւն է ստացել Ս. Պատ-

բիաբքից՝ որը իւր ձեռքով փակեզ (գլխարկ տաճ-կահայ հոգևորականաց) դրել է գլխին։ Կրօնական ժողովոյ որոշման համաձայն Կեսարիոյ Ս. Կարապետ վանք պիտի ուղարկուի վեղարի օրհնութիւնն ըստանալու։ Սանտալճեան Ստեփանոս եպիսկոպոսից (քանզի վիճակին Առաջնորդը վարդապետ է) և ուսանելու հայ Եկեղեցւոյ ծէսերն և խորհրդաւոր արարողութիւններն։ մինչև որ որ և իցէ պաշտօնի կոչուի։

ՊԱՐՍԿԱՀԱՅՐ։

Նոր Զուղայից ստացած տեղեկութիւններից իմանում ենք։ որ մարտի սկիզբներում Թեմական Առաջնորդ Գեր. Եսայի Արքեպիսկոպոսը մեկնել է դէպի Հնդկաստան։ յայտնելութիւն իւր հօտին Առաջնորդական պաշտօնը փոխանորդաբար վարում է Բարձր. Սահակ ծ. վարդապետ Ալվատեան։ որ ներկայումս Թեհրան եկել է ինչ ինչ գործոց կարգադրութեան համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ։

1. ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԸ . Ս. Վարդ. . . 77.
2. ՆՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷ . . . . . 79.
3. ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ. . . . . 86.
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱԿՈՒՄ . . Ն. Ք. . 82.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ։

5. ՀԱՅԵԼՈՒԿՆԵՐ. ԵՐԳ. ԱՂՕԹՔՆԵՐ Ս. Հ. . 83.
6. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՅԱՂԱՔ. ՄԱՏԻՆ. Ց. Ց. . 84.
7. ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ . . Ն. Քաջամանց 90.
8. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ . Մ. Բ. . . 92.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ։

9. ՆՈՐ ՆԱԽԻՋ. ՈՒՍՈՒՄՆ. ԳՈՐԾԸ Ն. Շ. . 96.
10. ԱՐԾՈՒԻ ԲՈՑՆԸ . . . . . Զ. Ց. . . 99.
11. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. . . . . 100.

ԱԶԳԱՅԻՆ։

12. ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ . . 102.
13 ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱԿՈՏԱՆԵԱՑ . . 105
1. ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . .
2. ՀՈԳԵՎԱՆԳԻՍՏ ԵՒ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ . . . .
3. ՔԱՂՈՒԱԾՔ ՎԵՀ. Հ. ԿՈՆԴԱԿՆԵՐՈՑ . .
4. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . .
4. ՆՐԵՒԱՆԻ ԹԵՄ. . . . . .
5. ՄԱՀԱՅՈՒՅՑԱԿ . . . . . .
6. ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . .
7. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ . . . . . .
8. ՆԱՄԱԿԱՏՈՒԹ . . . . . .
9. ՅԱՒԵԼՈՒԱԾ . ԱՐԱՐԱՏԻ . ՅԻՇԵՑԱԿ ՆՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ Ի ԳՐՈՑՆ ՀԱՐՈՒՔ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . .

ՆԵՄԱԿԱՏՈՒԹ

ԹԻՖԼԻԶ. Գ. Ա. — Ս. Էջմիածնի ձեռագիրների ցուցակը տպագրութեան համար պատրաստ լինելու մասին խմբագրութիւնս ոչինչ չը գիտէ։ «Հանդէս Ամսօրեայ»ի մի յայտարարութիւնից միայն իմացանք։ որ Ս. Էջմիածնի մատեաններից՝ կոնդակի հանդիսի գլխաւոր աշխատակից «Գերապ. Մեսրոպ վարդապետը» պատրաստում է այդ ցուցակը։ Մեզ յայտնի է միայն։ որ անցեալ տարի տասնեակ աշակերտներ նոյն վարդապետի ցուցմունքով մի քանի ձեռագրի նկարագրութեան սևագրութիւններ են արել։։

ՇՈՒՇԻ. Ս. Կ — «Սոկրատի» տպագրութիւնը ընդհատուած էր։ բայց այժմ նորից շարունակուում է։

ԹԻՖԼԻԶ. Ս Բ — Շատ ցաւալի կը լինէր եթէ մեր ուսուցիչները միմիայն զուտ մանկավարժական յօդուածներ կարդային։ որոնց միտքը ըմբռնելու համար նրանք դժբախտաբար պատրաստութիւն անգամ չունին։ Զարգացած մարդու համար բացի իւր մասնագիտութիւնից մի այլ աշխարհ ևս գոյութիւն ունի։ որի մասին տեղեկութիւն ունենալը նրա պարտքն է։ «Արարատի» թերութիւնները մենք ամենից աւելի գիտենք։ սակայն ուրախ ենք։ որ եռամսեայ հետամտութիւնից յետոյ խնդրասէրները միայն մանկավարժական բաժնի թերի լինելը գտան։ Ով ծանօթ է տպագրական գործին։ նա գիտէ միայն թէ ինչ կը նշանակէ 2 թերթ ծաւալ ունեցող ամսագիրը յարմարացնել այնքան բազմագիմի պահանջներին։ Սակայն յիշում էք արդեօք որ ևս (այլ. օրինակ։ որ այդ մարդիկ բացի իրենց խանութի ապրանքից մի այլ բան գովէին։ Այդ է չարչիների սովորութիւնը։ «Արարատի» էջերը կը կարուին և կը կարդացուին։ մանաւանդ հէնց չը հաւանողների ձեռքով։ Այդ հոգսը մեզ թողէք։